Մամուլի հաղորդագրություն
Սեպտեմբեր 17, 2024

Ընդլայնելով Հայաստանի գյուղաբնակ երիտասարդների կրթական հնարավորությունները. ՔՈԱՖ-ը ներկայացնում է «Կրթաթոշակների և կարիերայի զարգացման» ծրագրի արդյունքները

ԵՐԵՎԱՆ — Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի Տիգրան Մեծ սրահում տեղի կունենա «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) «Կրթաթոշակների և կարիերայի զարգացման» ծրագրի տարեկան միջոցառումը, որի շրջանակում կներկայացվեն ծրագրի բովանդակությունը, վերջին ուսումնական տարվա աշխատանքներն ու գրանցված արդյունքները: Միջոցառման ընթացքում տեղի կունենա նաև 2024-2025 թթ. ուսումնական տարվա նոր կրթաթոշակառուների ողջույնի ու շրջանավարտների ճանապարհելու արարողությունը:

Միջոցառմանը ներկա կլինեն և բացման խոսքով հանդես կգան ՀՀ Կառավարության ներկայացուցիչներ, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը, ՔՈԱՖ-ի երկարամյա աջակից, ծրագրի հիմնական բարերար Ջեք Յուրեջյանը:

Արդեն շուրջ 10 տարի է՝ ՔՈԱՖ-ն իր «Կրթաթոշակների և կարիերայի զարգացման» ծրագրի շրջանակում Հայաստանի գյուղաբնակ երիտասարդներին հնարավորություն է ընձեռում մասնագիտական կրթություն ստանալ հայաստանյան ԲՈՒՀ-երում: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ կրթաթոշակ տրամադրելուց զատ, ՔՈԱՖ-ը հնարավորություն է տալիս մասնակիցներին զարգացնել աշխատունակության տարբեր հմտություններ դասընթացների, մենթորության, կամավորության միջոցով, նպաստում է նրանց անձնային աճին, աջակցում կարիերայի զարգացման հարցում և օգնում ուսանողներին աշխատաշուկայում դառնալ ավելի մրցունակ: Ծրագրի ընթացքում յուրաքանչյուր կրթաթոշակառու, օգտագործելով իր հմտություններն ու կարողությունները, մշակում և իր համայնքում իրականացնում է զարգացման որևէ ծրագիր «Հերթը քոնն է» (“Pay it forward”) սկզբունքով:

Սիրով հրավիրում ենք լուսաբանման:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՍՏՈՐԵՎ

14:00 | Ողջույնի խոսք, պաշտոնական ելույթներ	• Լիանա Ղալթաղչյան, ՔՈԱՖ գործադիր տնօրեն • Ջեք Յուրեջյան, ՔՈԱՖ կրթաթոշակների և կարիերայի զարգացման ծրագրի բարերար • ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ *(ենթակա է հաստատման)* • ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ *(ենթակա է հաստատման)* • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ *(ենթակա է հաստատման)*
14:15 | ՔՈԱՖ Կրթաթոշակների և կարիերայի զարգացման ծրագրի ներկայացում	• Շուշանիկ Բոյաջյան, ՔՈԱՖ կրթական և շրջանավարտների ծրագրերի ղեկավար
14:35 | ՔՈԱՖ շրջանավարտների ծրագրի վիզուալ բաղադրիչների ներկայացում	• ՔՈԱՖ շրջանավարտներ
14:45 | 2024-2025 ուս. տարվա նոր կրթաթոշակառուների ողջունում («Երդման արարողություն»), ավարտող կրթաթոշակառուներին ճանապարհելու և նորերին ողջունելու արարողակարգ	• ՔՈԱՖ կրթական և շրջանավարտների ծրագրային թիմ

«Կրթաթոշակների և կարիերայի զարգացման» ծրագրի մասին

Յուրաքանչյուր ուսումնական տարվան ընդառաջ ՔՈԱՖ-ն իրականացնում է բաց մրցույթ, որին կարող են դիմել միայն ՔՈԱՖ կրթական ծրագրերի շրջանավարտները: Կրթաթոշակառուների ընտրությունը կատարվում է մրցութային կարգով՝ անհատական հարցազրույցների միջոցով գնահատելով դիմորդի՝ մասնագիտության ընտրության համապատասխանելիությունն իր հետաքրքրություններին և կարողություններին, ձգտումը ինքնազարգացման և ոլորտի լավ մասնագետ դառնալու հարցում, իր համայնքում ունեցած ակտիվությունն ու շարունակական փոփոխություններ իրականացնելու պատրաստակամությունը: Միևնույն ժամանակ, հաշվի է առնվում նաև դիմորդի սոցիալական ապահովվածությունը: Կրթաթոշակը տրամադրվում է ուսումնական մեկ տարվա համար և կարող է շարունակական լինել ուսումնական հաջորդ տարիների համար ևս, եթե կրթաթոշակառուն ցուցաբերում է բավարար առաջադիմություն ծրագրի բոլոր բաղադրիչների մասով:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի ստեղծագործական ղեկավար, հաղորդակցության բաժնի ղեկավարի ԺՊ
Միեր Սարգիսեան
Էլ. հասցե՝ mher.sarkissian@coaf.org
Բջջ.՝ +374 44 164448